

մի ոչ ապրեցուցանեին. բայց միայն Մերուժանն արտաքոյ զնդին դիպեալ, փախչէր:

ԳԼՈՒԽ ԽԹ.

1 Յաղագս Մռիկանայ՝ որ քառասուն բիւրաւք եկն կռուել ընդ թագաւորին Յայոց, եւ ի Վասակէ եւ ի զաւրացն Յայոց սատակեցաւ:

2 Ապա Մռիկան ոմն մեծ զաւրագլուխն Պարսից քառասուն բիւրաւք գայր հասաներ ի մարտ պատերազմի ընդ Արշակայ արքային Յայոց: 3 Ապա եւ զաւրքն Յայոց խրոխտացեալ հանդերձ իւրեանց զաւրավարան Վասակաւ, զազանաբար առիւծաբար դէմ ընդդէմ յարձակեին. եւ անդէն սատակեին զզաւրսն Պարսից, եւ սպանանեին զՄռիկանն: 4 Բայց Մերուժանն եւ այն անգամ փախչէր:

ԳԼՈՒԽ Ծ.

1 Յաղագս քակելոյ եւ քայքայելոյ թագաւորութեանն Յայոց, թէ ո՛րպէս ապստամբեցին բազումք ի Նախարարացն Յայոց, եւ ձեռս ետուն ի Շապուհ արքայն Պարսից. եւ թէ զիա՛րդ հուպ ցրուեցան այսր անդր, եւ Նուաղեաց թագաւորութիւնն Յայոց:

2 Չերեսուն եւ զչորս ամս ետուն պատերազմ երկիրս Յայոց ընդ թագաւորին Պարսից, եւ յետ այնորիկ ձանձրացան պարտեցան լքան աշխատեցան երկոքին կողմանքն: 3 Եւ սկսան սորսորել զնալ ի բանակէն Յայոց թագաւորին. թողին զիւրեանց արքայն Արշակ: 4 Բայց Նախ այսմ զնալոյ սկիզբն առնեին մեծամեծ աւագանին: 5 Նախ բղեաշին Աղծնեաց, եւ Նոշիրական<sup>1</sup> բղեաշին, եւ Մահկերտանն, եւ Նիհորականն, եւ Դասսընտրեին, եւ ամենայն Նախարարութիւն Աղծնեաց. եւ զաւրն եւ տունն տոհմին Աղծնեաց կողմանն ապստամբեցին յարքայէն Յայոց Արշակայ, եւ չոզան կացին առաջի արքային Պարսկաց Շապիոյ. եւ պարիսպ ածեին ի Յայոց կուսէ՝ որ Ձորայն կոչեն, դրունս դնեին. եւ զատուցին զիւրեանց աշխարհն ի Յայոց:

6 Եւ յետ սորա Գուգարաց<sup>2</sup> բղեաշին, եւ յետ սորա Ձորայ զաւառին տերն, եւ Կողբայ զաւառին տերն, եւ ընդ Նոսա Գարդմանաձորոյ տերն: 7 Եւ որք մաւտ էին ի Նոսա կողմն այնր ձեռին, որ շուրջ էին զնոթաւք, միահաղոյն ապստամբեցին ի թագաւորէն Յայոց Արշակայ, եւ չոզան զնացին առաջի կացին թագաւորին Պարսից Շապիոյ: 8 Ապստամբեցին յԱրշակայ արքայէն Յայոց ամուր զաւառն Արծախայ, եւ ամուր զաւառն Տմաւրեաց, եւ ամուր

1 *Յերկուս օրինակս՝* Նորշիրական

2 *Յօրինակի միում՝* Գողորեաց եւ յայլում՝ Գուղորեաց